ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ թիվ ՍՑ-ԼՕ-2019/159 ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ս. Հովսեփյան) 07.07.2020թ.-ին թիվ ԵԴ/33672/02/19 քաղաքացիական գործով ըստ հայցի «ՏՐԱԿ» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, երրորդ անձ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի՝ մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու պահանջի վերաբերյալ կայացված վճիռը, որով հայցը մերժվել է և Դատարանի 24.10.2019թ.-ի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը, որով արգելվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին ՍՑ-ԼՕ-2019/159 պաշտոնական ընթացակարգով կատարելու որևէ գործողություն՝ հայցվորին՝ «ՏՐԱԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, վերացվել է, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.09.2019թ. թիվ 26/26-1/15856-2019 գրությամբ «Տրակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2019/159 ընթացակարգի քննությունը վերսկսել:

2. Սույն ընթացակարգի քննության վերաբերյալ նիստը տեղի կունենա 12.02.2021թ. Ժամը 16:00-ին, ք. Երևան, Կոմիտաս 54բ հասցեում, 1-ին հարկի N1 նիստերի դահլիճում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**